ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No
20.03.2013թ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿՐՏՍԵՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ՍՊԸ - ը /այսուհետև՝ Գործատու/, որը գործում է 2004թ. Հուլիսի 30-ին ՀՀ Պետական Ռեգիստրի Կենտրոնական մարմնի կողմից գրանցված իր Կանոնադրությանը համապատասխան /վկայական թիվ ՕՅԱ No 065927/, ի դեմս Տնօրեն Գ.Ալեքսանյանի, մի կողմից եւ ՍՊԸ-ի աշխատակից տնօրեն Գագիկ Միսակի Ալեքսանյանը, մյուս կողմից /այսուհետև՝ հեղինակ/, միասին կոչվեցին կողմեր, և կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հեղինակը Գործատուին բացառիկ իրավունքի սկզբունքով փոխանցում է <ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ> ծրագրային համակարգը օրենքով նախատեսված պայմաններով օգտագործելու համար:
1.2. Գործատուն պարտավորվում է Հեղինակին աշխատավարձ վճարել համապատասխան պայմանագրով նախատեսված չափով և կարգով:
1.3. Հեղինակը երաշխավորում է, որ հանդիսանում է Օբյեկտի նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատերը, և չի խախտել երրորդ անձանց իրավունքը:
1.4. Սույն Պաւմանագիրն իր գործողությունը պահպանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համաձայն սույն պայամանագրի, Հեղինակի կողմից Գործատուին են փոխանցվում Համակարգի նկատմամբ բոլոր գույքային իրավունքները՝
ա) համակարգն օգտագործել գործատուի նախընտրած անվանման ներքո,
բ) իրակլսնացնել համակարգի վերարտադրությունը.
2.2 Պատվիրատուն համակարգն օգտագործելու ընթացքում պարտավորվում է պահպանել հեղինակի՝ անձնական ոչ գույքային իրավունքները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել համակարգն այլ անձանց ապօրինի օգտագործումից:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Սույն պայմանագրով իր պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած Կողմը հատուցում է մյուս կողմին դրանով պատճառված վնասները:
3.2. Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով շահույթ ստացած Կողմը պարտավոր է մյուս Կողմին վնասների հետ մեկտեղ հատուցել նրա բաց թողնված օգուտը ստացվւսծ եկամուտներից ոչ պակաս չափով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ և ՓՈՓՈԽՈՒՄԸ

4.1. Փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում Կողմերը կարող են վաղաժամ լուծարել սույն պայմանագիրը:
Հեղինակն իրավունք ունի լուծելու պայմանագիրը գործատուի կողմից Հեղինակին սույն պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարձատրությունը չվճարելու դեպքում:

4.2 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր և պատշաճ ձևով ստորագրվեն Կողմերի կողմից:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Բոլոր վեճերը և տարաձայնությունները, որոնք կապված են Կողմերի՝ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ, լուծվում են բանակցությունների միջոցով:
5.2 Բանակցությունների միջոցով վեճը չլուծելու դեպքում, վեճը լուծվում է դատական կարգով՝ դատարանի կողմից :

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
6.2 Սույն պայմանագրի կատարման ընթացքում ծանուցումները Կողմերը միմյանց պետք է ուղարկեն գրավոր:
6.3 Սույն Պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅԻՆՆԵՐԸ

ԳՈՐԾԱՏՈՒ	ՀԵՂԻՆԱԿ
Կրտսեր Ալեքսանյան ու որդիներ ՍՊԸ-ի տնօրեն Գ.Մ.Ալեքսանյան Երևան, Շիրակի փողոս, 2-րդ օբեկտ բն 28 Հայէկոնոմ բանկ, հ/հ **163018219838** ----------	Կրտսեր Ալեքսանյան ու որդիներ ՍՊԸ-ի տնօրեն Գ.Մ.Ալեքսանյան Երևան, Շիրակի փողոս, 2-րդ օբեկտ բն 28 Նույանականացման քարտ 001377878 տրված 08.01.2013թ 001-ի կողմից ----------